Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 060 27 48 04, 060 27 48 05
fax 060 27 48 03
news@aravot.am
www.aravot.am

# Առավոտ

a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 200 դրամ

218/6990/ 8 դեկտեմբեր 2023 ուրբաթ

ISSN 1829-2224

## Ա

## Ինչպիսի՞ն կլինի հաջորդ պատերազմը

Իմ բարեկամներից մեկը 44-օրյա պատերազմից անմիջապես հետո արեց հետեւյալ կանխատեսումը. հաջորդ պատերազմը, շատ հավանական է, լինելու է արհեստական ինտելեկտի հիման վրա ստեղծված զենքերով: Հետեւաբար, եթե մենք պատրաստվենք ԱԹՍ-ից պաշտպանվելու կամ դրանցով հարձակվելու գործողություններին, ապա կարող ենք կրկին պարտվել:

Ինչպես հայտնի է, գեներալները միշտ պատրաստվում են նախորդ պատերազմին, ինչից պարզ է, որ այդ նախապատրաստությունը պետք չէ թողնել միայն զինվորականների վրա: Լայնամասշտաբ պատերազմը վարում են ոչ թե գեներալները, այլ պետությունները՝ իրենց քաղաքական ղեկավարության գլխավորությամբ՝ մի հանգամանք, որը, հայտնի պատճառներով, կտրականապես հերքում է Հայաստանի ներկայիս իշխանությունը:

Եթե իմ ծանոթի առաջ քաշած տեսությունը ճիշտ է, ապա այն խոսակցությունները, թե իբր Ֆրանսիայի տված զենքը «փակելու է օդը», այնքան էլ տեղին չեն: Նախ՝ պարզ չէ, թե արդյո՞ք Ֆրանսիան մեզ իսկապես նման զենք է տալիս, երկրորդ՝ ինչո՞ւ այդպիսի զենք ունեցող Իսրայելը չկարողացավ իր «օդը փակել»:

Հակաօդային պաշտպանությունը, մի խոսքով, իհարկե, անհրաժեշտ է, բայց՝ ոչ բավարար: Այժմ մարդկությունը մոտ է կանգնած շատ ավելի սարսափելի զենքերի ստեղծմանը: Արհեստական ինտելեկտի հետ կապված կա մի կարեւոր խնդիր, որն, անշուշտ, գլոբալ է: Առաջին անգամ կարող է ստեղծվել մի զենք, որի կիրառումն ամբողջությամբ կախված չէ մարդկային գործոնից: Այժմ խոշոր տերություններն իրար սպառնում են միջուկային մարտագլխիկներ ունեցող հրթիռներով: Բայց նույնիսկ ատոմային ռումբի դեպքում մարդիկ են որոշում, թե երբ, որտեղ եւ ինչպես այն կիրառել:

Արհեստական ինտելեկտը ստեղծում է իր սեփական բովանդակությունը, օրակարգը, ինքնուրույն է գտնում լուծումները: Եթե պետությունները խիստ միջոցներ չկիրառեն, ապա այդ ոլորտի ռազմական բաղադրիչի զարգացումը կարող է բերել անկանխատեսելի եւ շատ ավելի ողբերգական, քան միջուկային զենքն է, հետեւանքների: Մանավանդ այսօր՝ ըստ էության, ընթացող համաշխարհային պատերազմի պայմաններում:

Դա կանխելու համար բազմաթիվ քայլեր են անհրաժեշտ: Դրանցից մեկն այն է, որ պետությունների ղեկավարները, որոշում ընդունողները, ոլորտը զարգացնողները պետք է ավելի ուշադիր լսեն փորձագետներին, գիտնականներին, մտավորականներին, նաեւ՝ հումանիտար ոլորտի ներկայացուցիչներին:

Հայաստանում, համենայնդեպս, դա անհրաժեշտական է հնչում:

**ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

## «Քվեարկության արդյունքների պատասխանատվությունն իմը չէ, ժողովրդի քվեն ստացած պատգամավորներինն է». Հայկուհի Հարությունյան



*Ազգային ժողովում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի ընտրության անցկացման մասին հայտարարվեց, բայց ընտրությունը չկայացավ, քանի որ պատգամավորները չմասնակցեցին: ՔՊ եւ «Հայաստան» խմբակցությունները հայտարարեցին ընտրությանը չմասնակցելու մասին: Առաջադրված թեկնածուները երկուսն էին՝ հանձնաժողովի նախկին նախագահ Հայկուհի Հարությունյանը (լուսանկարում) եւ Նարինե Ավետիսյանը: «Առավոտի» հետ զրույցում հարցին, թե ինչո՞ւ որոշեց առաջադրվել, եթե ի սկզբանե այս իրավիճակը սպասելի էր, Հայկուհի Հարությունյանը պատասխանեց, որ ժողովրդավարական երկրում երբեմն նաեւ այս տեսակի դժվար ճանապարհով պիտի ցույց տալ գործընթացները: «Եվ պրոցեսներն առանձին կայանում են նաեւ հենց այս տեսակի գործընթացների միջոցով, այլապես այս ամբողջը՝ որպես հուշակագրային դրույթներ, ժողովրդավարության մասին չէ իրականությունը: Եթե ընդունում ենք, որ գործընթացը մրցակցային է, որ մրցութային խորհուրդը ներկայացրել է ընտրված թեկնածուներին՝ ըստ կոնկրետ հատկանիշների, ապա այլ տարբերակ, քան մինչեւ վերջ այդ գործընթացն անցնելը, ես ինքս ինձ համար չեմ դիտարկում: Եվ կարծում եմ՝ իմ ընկալած կոռուպցիայի կանխարգելման տեսանկյունից դա նաեւ հենց այն վճռականության հարցն էր, որը ես դրսեւորեցի: Անկախ այն բոլոր տեսակի հայտարարություններից, վերաբերմունքից, որը դրսեւորվեց, միեւնույն է, ես ինքս ինձ եւ իմ պատկերացրած կոռուպցիայի կանխարգելմանը հավատարիմ լինելով՝ պատասխանատվությունը նաեւ վերցրեցի: Քվեարկության արդյունքների պատասխանատվությունն այլեւս իմը չէ, քվեարկության արդյունքների պատասխանատվությունը ժողովրդի քվեն ստացած պատգամավորներինն է, բոլոր հարցերին իրենք պետք է պատասխանեն»,- հավելեց նա: Հայկուհի Հարությունյանը նաեւ ասաց, որ մրցույթը հայտարարվելուց հետո դարձյալ առաջադրվելու իրավունք ունի, բայց այդ պահին նույնիսկ չի էլ ուզում դրա մասին մտածել:*

**Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կարդացեք նաեւ՝ էջ 4:

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Ադրբեջանում արտահերթ նախագահական ընտրություններ կանցկացվեն

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը Ադրբեջանում արտահերթ նախագահական ընտրություններ է նշանակել 2024 թվականի փետրվարի 7-ին: Ըստ պլանի՝ դրանք պետք է կայանային 2025 թվականին: Ընտրություններ նշանակած Իլհամ Ալիեւն ինքը կկարողանա մասնակցել դրանց, քանի որ երկրի սահմանադրության համաձայն՝ մեկ անձ կարող է զբաղեցնել պետության ղեկավարի պաշտոնը անսահմանափակ ժամկետով: Ալիեւը երկիրը ղեկավարում է 2003 թվականից: 2018 թվականի ընտրություններում նա ստացել է ձայների ավելի քան 86 տոկոսը: .

Ընտրությունների օր է հստակեցվել նաեւ Ռուսաստանում: Մարտի 17-ին կկայանան ՌԴ հերթական նախագահական ընտրությունները: Վլադիմիր Պուտինի կողմից կազմակերպված օրենսդրական փոփոխությունների արդյունքում նա եւս կկարողանա մասնակցել ընտրություններին: Նա կարող է հավակնել եւս երկու վեց տարվա ժամկետի՝ հաջորդ տարի իր ներկայիս ժամկետի ավարտից հետո, ինչը պոտենցիալ թույլ կտա նրան մնալ իշխանության մինչեւ 2036 թվականը:

### «Ռուբեն Վարդանյանին վերաբերվում են որպես նույնիսկ ոչ ռազմագերու, այլեւ՝ պատանդի». Նասիմ Թալեբ

Ականավոր գիտնական, մաթեմատիկոս, բիզնեսմեն, թրեյդեր, ակնարկագիր, փիլիսոփա Նասիմ Նիքոլաս Թալեբը X-ի իր միկրոբլոգում գրում է. «Հայաստանը օգնության կարիք ունի: Հենց նոր իմացա, որ իմ ընկեր Ռուբեն Վարդանյանը գերի է Ադրբեջանում: Նա իր կարիերան ֆինանսական ներդրող-բարերարից փոխեց Արցախի առաջնորդ դառնալով: Նրան վերաբերվում են որպես նույնիսկ ոչ ռազմագերու, այլեւ՝ պատանդի»:

### Ռեփեր Սնուփ Դոգի համերգը տեղի կունենա մյուս տարի. ԿԳՄՍ նախարար

Ռեփեր Սնուփ Դոգի համերգը տեղի կունենա, այժմ նրա հետ բանակցվում է համերգի ժամկետների շուրջ: Այս մասին երեկ կառավարության նիստից հետո լրագրողների հետ ճեպազրույցում ասաց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի (ԿԳՄՍ) նախարար Ժաննա Անդրեասյանը: Նա հայտնեց, որ համերգի կազմակերպիչ ընկերությունը բանակցում է՝ հստակեցնելու համերգի օրը, բանակցություններից հետո պարզ կլինի կոնկրետ ժամկետը: Ըստ Անդրեասյանի, նախատեսվում է, որ համերգը կկայանա եկող տարի մայիս-հունիս ամիսներին: Հիշեցնենք, որ այս ռեփերի համերգի համար կառավարությունը հատկացրել է 6 մլն դոլար: Նրա համերգի օր էր սահմանված սեպտեմբերի 23-ը, Երեւանում, սակայն համերգը հետաձգվեց Արցախում տեղի ունեցած ողբերգական դեպքերով պայմանավորված:

# Եվրոպական դատարանը ՍԴ-ի նախկին 3 դատավորների եւ նախկին նախագահի գանգատները ճանաչել է անընդունելի



Սույն թվականի դեկտեմբերի 7-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հրապարակել է «Գյուլումյանը եւ այլք ընդդեմ Հայաստանի» թիվ 25240/20 գործով որոշումը: Եվրոպական դատարանը Սահմանադրական դատարանի նախկին երեք դատավորների եւ Սահմանադրական դատարանի նախկին նախագահի գանգատները ճանաչել է անընդունելի: Ներկայացված գանգատները վերաբերում էին Սահմանադրական դատարանի նախկին երեք դատավորներ Ա. Գյուլումյանի, Հ. Նազարյանի, Ֆ. Թոխյանի եւ Սահմանադրական դատարանի նախկին նախագահ Հ. Թովմասյանի՝ «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի (արդար դատաքննության իրավունք), 8-րդ (անձնական եւ ընտանեկան կյանքը հարգելու իրավունք), 14-րդ (խտրականության արգելք), 18-րդ (իրավունքների նկատմամբ սահմանափակումների կիրառման սահմանները) եւ Կոնվենցիային կից 1-ին արձանագրության 1-ին (սեփականության իրավունք) հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտումներին: Մասնավորապես դիմումատուները բողոքել են, որ զրկված են եղել իրենց պաշտոնների վաղաժամկետ դադարեցումը ներպետական մակարդակում վիճարկելու հնարավորությունից, եւ այդ դադարեցումը եղել է կամայական: Դիմումատուների գանգատների վերաբերյալ ՀՀ կառավարությունը ներկայացրել էր իր առարկությունները՝ պնդելով, որ գանգատն անընդունելի է եւ տեղի չի ունեցել դիմումատուների իրավունքների որեւէ խախտում: Եվրոպական դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ ներկայացված գանգատներում բարձրացված պահանջները Կոնվենցիայի տեսանկյունից անընդունելի են ratione materiae՝ Կոնվենցիայի կողմից պաշտպանության ենթակա իրավունքի բացակայության հիմքով: Եվրոպական դատարանի որոշումը վերջնական է եւ ենթակա չէ բողոքարկման:

***ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21.06.2014թ. ՀՕ-110-Ն) համաձայն, ինչպես նաեւ ՀՀ կառավարության 19.11.2014թ. թիվ 1325-Ն որոշման հավելվածի 5-րդ գլխի 40-րդ մասով սահմանված կարգով, սույն թվականի դեկտեմբերի 20-ին՝ ժամը 15:00-ին, Երեւան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի շենքում (հասցե՝ ք. Երեւան, Գ. Նժդեհի փողոց հ. 26, հեռ՝ +(374 11) 518-808)) տեղի կունենա ««ԻՆ-ՎԻ» ՍՊ ընկերության էլեկտրահաղորդալարերի եւ մալուխների արտադրության զարգացում» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկում (3-րդ հանրային քննարկում):

Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ «ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ գրասենյակում (հասցե՝ ք. Երեւան, Գրիբոյեդովի 11-1, հեռ.՝ +374 91 497-128), էլ. փոստ՝ info@atms.am): Գրավոր դիտողությունները եւ առաջարկությունները կարելի է ներկայացնել ծանուցումից հետո 12 աշխատանքային օրվա ընթացքում:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ Օրենքով (21.06.2014թ.ՀՕ-110-Ն), ինչպես նաեւ ՀՀ կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված կարգավորումներով՝ 2023թ. դեկտեմբերի 20-ին, ժամը 12:00-ին, ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի Քարաբերդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի վարչական շենքում տեղի կունենա «ԱՍՍԱԹ» ՍՊԸ կողմից փորձաքննության ներկայացված՝ ՀՀ Լոռու մարզի Քարաբերդի ոսկու հանքավայրի (Կենտրոնական տեղամաս) ժամկետի երկարաձգման, բացահանքի եւ ստորգետնյա հանքի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման գործընթացների իրականացման(այդ թվում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման հաշվետվության) վերաբերյալ հանրային քննարկումները: Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ Փամբակի համայնքի ղեկավարի նստավայրում (հասցե՝ Լոռու մարզ, գ. Փամբակ, , հեռ. +374 98393131, էլ. հասցե՝ info@pambak.am), եւ համայնքի https://pambak.am կայքէջում, Քարաբերդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում, ինչպես նաեւ «ԱՍՍԱԹ» ՍՊ ընկերությունում (հեռ.+37494104999, էլ. հասցե՝ assatmining@gmail.com): Ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ առաջարկություններն ու դիտողությունները կարող են ներկայացվել սույն ծանուցման հրապարակման օրվանից հաշված 18 աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես բանավոր՝ լսումների ընթացքում, այնպես էլ գրավոր՝ այն հասցեագրելով Փամբակի համայնքապետարանի կամ ընկերության պաշտոնական էլ. հասցեներին:

## ԿՈՐԵԼ Է

Մարինե Մերուժանի Պետրոսյանի.՝ Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտից 1998 թ. ստացված թիվ A 044701 դիպլոմը, գրանցման թիվ 436: Համարել անվավեր:

---

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաեւ ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (երկրորդ փուլ) 2023 թ. դեկտեմբերի 19-ին, ժամը 15:00-ին Աբովյան խոշորացված համայնքի Առինջ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում տեղի կունենա «Էկո ազոտ» ՍՊԸ կողմից Առինջ, Ս.Մկրտչյան թաղամասի 1-ին փողոց 32 հասցեում նախատեսվող բնակելի թաղամասի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ: Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում www.env.am, ք. Երեւան, Բուզանդի 1/3 հասցեում, հեռ. 011/22-02-17 կամ զանգահարելով 099991155:

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաեւ ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2023թ. դեկտեմբերի 18-ին ժամը 12:00-ին ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձորի խոշորացված համայնքի Մեղրաձոր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի կունենա «ԱՄ ԱՐՏ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի «Թեժասարի» նեֆելինային սիենիտների հանքավայրի «Թեժագետ» տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով պաշարների վերագնահատման երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ /1-ին փուլ/:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի հունվարի 10-ին ժամը 11:30-ին Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի շենքում կկայանա աճուրդ Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողի համար (կառուցապատման նպատակով)՝ Վարդահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող բնակավայրերի նշանակության այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր 10-041-0005-0100, մակերեսը 0,27331 հա, մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 200%-ի չափով:

Աճուրդի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետը 2024 թվականի հունվարի 4-ին, ժամը՝ 18:00-ին, նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, քայլի չափը հաշվել մեկնարկային գնի 5%-ի չափով: Հողամասն ապահովված է մոտեցման ճանապարհով, հողամասում ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքներ առկա չեն եւ հողամասի նկատմամբ սահմանափակումներ, սերվիտուտներ չկան: Մասնակցության համար անհրաժեշտ է ներկայացնել հայտ, անձնագրի պատճեն, մասնակցության վճարի անդորրագիր: Մասնակցության վճարի չափը՝ 10 000 դրամ:

---

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաեւ ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2023թ. դեկտեմբերի 20-ին ժամը 15:00-ին ՀՀ Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի կունենա Վայոց Ձոր մարզում Ելփինի ջրամբարի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ (առաջին հանրային քննարկում):

Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ՝ ք. Երեւան, Սեբաստի 31/2 հասցեում, /հեռ. 091-58-66-35/:

---

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաեւ ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2023թ. դեկտեմբերի 20-ին ժամը 10:00-ին ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ամբերդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի կունենա Արմավիրի մարզում Քասախի ջրամբարի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ (առաջին հանրային քննարկում):

Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ՝ ք. Երեւան, Սեբաստի 31/2 հասցեում, /հեռ. 091-58-66-35/:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ եւ ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշման հավելվածի համաձայն, 2023թ. Դեկտեմբերի 19-ին ժամը 15:00-ին Վեդի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի կունենան «ՍԵՆԴ ՈՐԼԴ» ՍՊԸ -ի Լուսառատի ավազի հանքավայրի շահագործման ընդլայնման նախագծի աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ (1-ին լսում):

Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ՀՀ, Արարատի մարզ, ք.Վեդի, Թումանյան փ., շ. 6, հեռ +(374)23423332

---

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաեւ ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2023թ. դեկտեմբերի 20-ին ժամը 15:00-ին, ՀՀ Արարատի մարզի Վեդի խոշորացված համայնքի նիստերի դահլիճում տեղի կունենա «Մար Գրուպ 1» ՍՊԸ կողմից ներկայացված՝ ՀՀ Արարատի մարզի Վեդի խոշորացված համայնքի Փոքր Վեդի բնակավայր Մ.Գորգիսյան փողոց 1/3 հողամասում գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրամասի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկումներ /1-ին քննարկում/: Հեռ.+37498841068

*Հրատարակության ԺԸ տարի*
*Հիմնադիր եւ հրատարակիչ՝*
*«Առավոտ» օրաթերթ» ՍՊԸ*

**Գլխ. խմբագիր՝** Արամ Աբրահամյան
**Գլխ. խմբագրի տեղակալ՝** Վ. Պետրոսյան
**Տնօրեն՝** Գարիկ Մելքոնյան
**Հայտարարություն եւ գովազդ՝** 096 451938, 094 451938

Երեւան, 0023, Արշակունյաց պողոտա 4, 15-րդ հարկ, ինդեքս՝ 69254:
Հեռ.՝ 060-27-48-02, 060-27-48-05 (լրահավաք), գովազդ եւ հայտարարություններ՝ 060-27-48-01:
*Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում:*
*Մեջբերումներ անելիս հղումը «Առավոտին» պարտադիր է: Տպաքանակը՝ 1000 օրինակ:*
*R տառով հոդվածները գովազդային են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:*
Տպագրվում է՝ «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70ա:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Ստորագրված է տպագրության 07.12.2023թ.:
Գրանցման վկայականը՝ N 02Ա046888, 27 դեկտեմբերի 1999թ.:
Համարի պատասխանատու՝ գլխավոր խմբագիր Ա. Աբրահամյան

©
Տառատեսակը, ոճը՝ Մկրտիչ Մաթեւոսյանի, համակարգչային շարվածքը եւ էջադրումը՝ «Առավոտի»: